

ՈԱԶՄԱԿԱՆ ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱԶՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ *

ՀՏԴ 323

DOI: 10.52063/25792652-2025.1.24-125

ՍՎԵՏԼԱՆԱ ԶԻՆԱՎՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի միջազգային հարաբերությունների և
հասարակական-քաղաքական գիտությունների ինստիտուտի
համաշխարհային քաղաքականության և
միջազգային հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

svetlana.jilavyan@gmail.com

[ORCID: 0000-0003-2490-076X](https://orcid.org/0000-0003-2490-076X)

Հոդվածում քննարկված է ռազմական օմբուդսմենի ինստիտուտի դերը
զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության մեխանիզմի ձևավոր-
ման մեջ: Հեղինակը շեշտադրում է օմբուդսմենի կարևորությունը զինծառա-
յողների իրավունքների պաշտպանության, ներքին բարեփոխումների
խթանման և զինված ուժերում իրավական ու ժողովրդավարական
վերահսկողության ամրապնդման հարցում: Հետազոտության նպատակն է
գնահատել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործող մոդելի
արդյունավետությունը և քննարկել ռազմական օմբուդսմենի առանձին
ինստիտուտի ներդրման նպատակահարմարությունը:

Հոդվածի հիմնական խնդիրներ են սահմանվել՝

- ուսումնասիրել ռազմական օմբուդսմենի դերը զինծառայողների
իրավունքների պաշտպանության և զինված ուժերում ժողովրդավարական
վերահսկողության ամրապնդման գործում:

- Վերլուծել միջազգային փորձը և տարբեր երկրների օմբուդսմենի
մոդելների առավելություններն ու թերությունները:

- Գնահատել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի ներկայիս
գործառնությունները և դրանց սահմանափակումները:

- Բացահայտել առանձին ռազմական օմբուդսմենի ինստիտուտի
ստեղծման հնարավոր առավելություններն ու ռիսկերը:

Հետազոտության մեթոդները ներառում են համեմատական
վերլուծություն, միջազգային փորձի ուսումնասիրություն և Հայաստանի
Հանրապետության օրենսդրական ու ինստիտուցիոնալ շրջանակի
գնահատում: Կիրառվել են նաև որակական մեթոդներ՝ օմբուդսմենի
մոդելների արդյունավետության և կիրառելիության գնահատման համար:

Հոդվածի եզրակացության մեջ առաջարկված է համապարփակ
ուսումնասիրել ռազմական օմբուդսմենի ներդրման արդյունավետությունը
Հայաստանում՝ համադրելով միջազգային փորձն ու ազգային
առանձնահատկությունները:

Հիմնաբառեր՝ մարդու իրավունքների պաշտպան, քաղաքացիական
վերահսկողություն, զինված ուժեր, իրավական սահմանափակումներ, միջազգային
փորձ, զինծառայողների իրավունքներ, ռազմական օմբուդսմեն:

* Հոդվածը ներկայացվել է 23.02.2025թ., գրախոսվել՝ 14.03.2025թ., տպագրության ընդունվել՝
30.04.2025թ.:

Ներածություն

Ժամանակակից հետպատերազմական Հայաստանում տեղի ունեցող ժողովրդավարության ամրապնդման և օրենքի գերակայության զարգացման գործընթացը ենթադրում է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանի, այլև ռազմական օմբուդսմենի և պետական կառույցների միջև քաղաքական փոխգործակցության արդյունավետ համակարգի ստեղծում: Ժամանակակից պայմաններում այս խնդիրը մեծ ուշադրություն է գրավում գիտական և փորձագիտական հանրության ներկայացուցիչների, քաղաքական գործիչների, պետական պաշտոնյաների և հասարակական-քաղաքական առաջնորդների կողմից:

Հայաստանի համար, բացի ժողովրդավարությունից, այլ քաղաքական ռեժիմ չի կարող լինել, բայց ժողովրդավարությունը, առաջին հերթին, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ոլորտում գործող օրենսդրության պահպանումն ու հարգանքն է:

Հայաստանում ռազմական օմբուդսմենի և պետական կառույցների հետ քաղաքական փոխգործակցության խնդրի ուսումնասիրությունը և դրա արդիականությունը (քաղաքական վերլուծություն) պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

Նախ՝ հայկական բանակի բարեփոխումը, որն ընդգրկում է քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտները, որտեղ որոշիչ են մարդու իրավունքները և ազատությունները, որոնց ապահովմամբ իրականացվում է ժողովրդավարության զարգացումն ու հաստատումը, անհատի, հասարակության և պետության իրավական անվտանգությունը.

Երկրորդ՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի աճող կարևորությունը ժողովրդավարական պետության կայացման գործում, այդ հասարակական-քաղաքական ինստիտուտի բարելավման անհրաժեշտությունը, որի նպատակն է բարձրացնել դրա արդյունավետությունը գործունեության բոլոր ոլորտներում և այս մարմինը աշխատանքի որակապես նոր մակարդակի հասցնել՝ ուժեղացնելով քաղաքական փոխգործակցությունը պետական իշխանության ինստիտուտների հետ.

Երրորդ՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման և ամրապնդման հետ կապված խնդիրների համապարփակ վերլուծության անհրաժեշտությունը՝ նրա տեղն ու դերը պետական մարմինների ժամանակակից քաղաքական կառուցվածքում, Հայաստանի պետական-իրավական համակարգում որոշելու համար.

Չորրորդ՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի և պետական իշխանությունների միջև քաղաքական փոխգործակցության զարգացման հիմնական միտումները որոշելու անհրաժեշտությունը.

Հինգերորդ՝ թեմայի անբավարար մշակվածությունը ռազմագիտական և քաղաքագիտական աշխատություններում՝ կապված Հայաստանում ռազմական օմբուդսմենի և պետական կառույցների հետ քաղաքական փոխգործակցության ուսումնասիրության հետ:

Պետությունում հրատապ անհրաժեշտություն կա ունենալու քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության գործող մեխանիզմ: Ներկա փուլում իրավական անվտանգության հետ կապված խնդիրներ կան, որոնք պահանջում են մասնագիտական ըմբռնում և մտածված լուծումներ (Macorya 291-308): Մարդու իրավունքների պաշտպանի հիմնական պարտականությունն է ապահովել շահերի հավասարակշռությունը, որպեսզի մեծամասնությունը չլինի ճնշող, փոքրամասնությունը չճնշվի: Այսպիսով՝ աշխատանքը միտված է գնահատելու Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործող մոդելի

արդյունավետությունը և բացահայտելու ռազմական օմբուդսմենի դերը Հայաստանի պետական-իրավական համակարգում՝ համադրելով միջազգային փորձը և ազգային առանձնահատկությունները:

Ռազմական օմբուդսմենի մարդասիրական չափումը

Ժողովրդավարական ցանկացած երկիր իր անվտանգությունն ապահովելու հիմնարար գործոններից պետք է համարի մարդու իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանությունը՝ մշտապես կատարելագործելով պաշտպանական ներպետական մեխանիզմները (Barseghyan and Jilavyan 148-149):

Չինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) կամ օմբուդսմանի ինստիտուտը ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ զինծառայողները հաճախ կանգնած են բացառիկ իրավական և էթիկական մարտահրավերների առաջ: Փաստաբանների միջազգային ասոցիացիան տվել է «օմբուդսմեն» հասկացության հետևյալ սահմանումը՝ «Սահմանադրության կամ օրենսդիր իշխանության ակտով նախատեսված, խորհրդարանին հաշվետու բարձրաստիճան հասարակական պաշտոնատար անձի կողմից ղեկավարվող ծառայություն, որը տուժած անձանցից ընդունում է պետական մարմինների, ծառայողների, գործատուների դեմ ուղղված դիմում-բողոքներ կամ գործում է սեփական նախաձեռնությամբ և իրավասու է հետաքննություն իրականացնելու, առաջարկելու ուղղորդվող քայլեր և ներկայացնելու զեկույցներ»:

Ինչպես աշխարհի մի շարք պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում օմբուդսմենի ինստիտուտը խթանում է զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը, ապահովում թափանցիկություն, պաշտպանում զինծառայողների իրավունքները, աջակցում ներքին բարեփոխումներին և նպաստում նրանց կյանքի որակի ու մարտական համախմբվածության բարձրացմանը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը: (...) («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենք, հոդված 2):

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) կարգավիճակը զգալի փոփոխություններ է կրել 1995, 2005 և 2015 թվականներին: 1995 թվականի Սահմանադրությունում ՄԻՊ-ի մասին դրույթներ բացակայում էին, ինչը պայմանավորված էր պետության կայացման վաղ փուլով: 2005 թվականին ներդրվեց ՄԻՊ-ի ինստիտուտը՝ սահմանադրական կարգավիճակով, անկախությամբ և սահմանափակ լիազորություններով, ինչը համապատասխանեցվեց միջազգային չափանիշներին (ՀՀ սահմանադրություն, հոդված 83.1): 2015 թվականի փոփոխություններն ընդլայնեցին ՄԻՊ-ի լիազորությունները՝ ներառյալ խոշտանգումների կանխարգելման մեխանիզմը և մասնավոր սուբյեկտների մոնիթորինգը՝ ամրապնդելով անկախությունը (ՀՀ սահմանադրություն, հոդված 191), սակայն, մեր դիտարկմամբ, վերջինիս գործնական արդյունավետությունը շարունակում է որոշակիորեն կապված լինել քաղաքական և հասարակական աջակցությունից:

Քննարկելով ՀՀ ՄԻՊ գործառույթները և մոդելը՝ հարկ է նշել, որ մի շարք երկրներ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն առավել

թիրախային դարձնելու նպատակով առաջնորդվում են ռազմական օմբուդսմենի առանձին ինստիտուտի ներդրմամբ: Հաշվի առնելով առկա միջազգային փորձը՝ նպատակահարմար է քննության առնել օմբուդսմենի ինստիտուտի այլ մոդելները և վեր հանել դրա տեղայնացման հնարավորությունը և նպատակահարմարությունը:

Գործում են մեծ թվով ռազմական օմբուդսմենի ինստիտուտներ, որոնք լիազորված են զբաղվելու զինված ուժերում առաջացած կամ զինված ուժերի գործունեությունից բխող խնդիրների հասցեագրմամբ: Տարբեր երկրների ինստիտուտների կարգավիճակները և գործառնությունները զգալիորեն տարբերվում են, ինչը, անշուշտ, պայմանավորված է տվյալ երկրների ռազմական ավանդույթներով, իրավական համակարգով, հասարակություն - զինված ուժեր հարաբերությունների բնույթով, ինչպես նաև նրանով, թե սկզբնապես ինչ խմբերի/ույրտների համար են նախատեսված եղել տվյալ ինստիտուտները (Medeiros 195-242):

Միջազգային պրակտիկայում տարբերակվում են օմբուդսմենի ինստիտուտի կառուցվածքի և իրավասությունների հետ կապված **չորս հիմնական մոդել՝** 1. Երկրներ, որտեղ զինվորական օմբուդսմեն չկա (օրինակ՝ Սլովակիան և Իսպանիան): 2. Երկրներ, որոնցում օմբուդսմենի ինստիտուտը հենց զինված ուժերի կազմում է՝ որպես «զխավոր տեսուչ» (օրինակ՝ Նիդեռլանդներն ու Բելգիան): 3. Երկրներ, որտեղ քաղաքացիական օմբուդսմենի պատասխանատվությունը տարածվում է նաև զինված ուժերի վրա (օրինակ՝ Շվեդիան, Դանիան, Լեհաստանը): 4. Երկրներ, որտեղ գործում է անկախ զինվորական օմբուդսմենի ինստիտուտ (օրինակ՝ Գերմանիան, Կանադան, Իռլանդիան):

Միաժամանակ, ԱՊՀ պետությունների մոդելային օրենքով սահմանվում է զինծառայողների գործերով խորհրդարանական հանձնակատարի ինստիտուտը՝ նշանակվելով խորհրդարանի կողմից: Տվյալ պաշտոնատար անձը խորհրդարանին տեղեկացնում է զինված ուժերում առկա իրավիճակի և գործունեության արդյունքների մասին՝ դրանով իսկ հանդիսանալով զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «իրավապաշտպան» (Содружество независимых государств 14):

Անդրադառնալով զինված ուժերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող օմբուդսմենի մոդելներից թերևս ամենատարածվածներից մեկին, այն է՝ քաղաքացիական կամ ընդհանուր բնույթի օմբուդսմենին, հարկ է նշել, որ վերջինիս լիազորությունների մեջ են մտնում հասարակության բոլոր անդամների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և կառավարության տարբեր ուղղություններին առնչվող բողոքների և խնդիրների հասցեագրումը: Լիազորությունների այսպիսի լայն շրջանակ ունեցող քաղաքացիական օմբուդսմենի ինստիտուտներն ունեն մի շարք առավելություններ: Նախ՝ լիազորությունների լայն շրջանակի շնորհիվ այս հաստատությունները կարող են կարևոր դիրք և ճանաչում ձեռք բերել քաղաքական համակարգում: Այս դեպքում ավելի դժվար կլինի անտեսել նրանց ներկայացրած առաջարկությունները: Քաղաքական համակարգում նրանց հեղինակավոր դիրքը ենթադրում է, որ հասարակությունը, այդ թվում՝ զինված ուժերի անդամներն իրազեկված կլինեն այս ինստիտուտների դերի և գործառնությունների մասին, և ավելի հավանական է, որ իրենց բողոքները և խնդիրները կուղղեն նրանց: Հաշվի առնելով, որ այս ինստիտուտներն ունեն ընդհանուր իրավասություն, հավանական է, որ առաջարկություններ մշակելիս նրանք հաշվի կառնեն թե՛ քաղաքացիների և թե՛ զինված ուժերի անդամների շահերը հավասարապես և խտրականություն չեն դնի նրանց միջև, ինչը իր հերթին նպաստում է հարցերի շուրջ բազմակողմանի և այլընտրանքային մոտեցումների հավաքագրմանը: Բացի այդ, սույն մոդելի պարագայում պետական բյուջեի նպատակային և խնայողական օգտագործման տեսանկյունից այս մոդելը առավել քիչ ծախսատար է, քանի որ օմբուդսմենի գործառնություններն իրականացվում են մեկ

ընդհանուր գրասենյակի, ոչ թե առանձին մասնագիտացված ինստիտուտների կողմից:

Չնայած վերոթվարկյալ դրական կողմերին՝ այս մոդելը իր հերթին ունի մի շարք խոցելի կողմեր: Մասնավորապես՝ քաղաքացիական օմբուդսմենի ինստիտուտները, ի տարբերություն զինված ուժերում ռազմական տեսուչի և անկախ զինվորական օմբուդսմենի ինստիտուտի, չունեն համապատասխան մասնագիտական գիտելիքներ և լիազորությունների լայն շրջանակի պատճառով բավարար վստահության չեն արժանանում զինված ուժերի կողմից, և հնարավոր է՝ չկարողանան ուշադրություն դարձնել անձնակազմի առանձին խնդիրներին: Բացի այդ՝ առկա լայն լիազորությունները և դրան զուգահեռ զինված ուժերին առնչվող գործերին հատկացված անբավարար ռեսուրսները կարող են պատճառ հանդիսանալ բողոքների կարգավորման գործընթացների հետաձգման: Որպես վերոնշյալ խնդրի լուծման տարբերակ տարբեր երկրներ դիտարկում են օմբուդսմենի գրասենյակի ներսում մասնագիտացված ստորաբաժանումների ստեղծումը, օրինակ՝ բացառապես զինված ուժերի հարցերով զբաղվող տեղակալի նշանակումը: Այս մոտեցումը կիրառվել է Ֆիլիպիններում և Շվեդիայում, որտեղ օմբուդսմենի գրասենյակի աշխատանքը բաժանված էր պատասխանատվության որոշակի շրջանակ ունեցող մի քանի ենթաբաժինների, այդ թվում՝ նաև զինված ուժերի, այլընտրանքային ծառայության և պաշտպանության նախարարությանն առնչվող այլ հարցերի քննության (Erkkilä 21-63):

Վերոհիշյալ մոդելներից զատ որոշ երկրներ իրենց օրենսդրությամբ սահմանում են անկախ օմբուդսմենի ինստիտուտների ստեղծումը: Այս ինստիտուտները, ի տարբերություն մյուս մոդելների, իրավասություն ունեն միայն զինված ուժերի նկատմամբ, սակայն հանդիսանում են քաղաքացիական գրասենյակներ և գործում են զինված ուժերի հրամանատարության օղակից անկախ: Սույն մոդելի հիմնական առավելությունն է տվյալ ոլորտում մասնագիտացած լինելը և միայն այս ոլորտի խնդիրների ու բողոքների քննությամբ զբաղվելը: Այն, ունենալով հրապարակային զեկույցներ ներկայացնելու լիազորություն, նպաստում է այլ մարմինների, օրինակ՝ խորհրդարանի կողմից ևս վերահսկողություն իրականացնելուն, ինչն էլ իր հերթին նպաստում է զինված ուժերի նկատմամբ վերահսկողության թափանցիկությանը և հաշվետվողականությանը: Այսինքն՝ այն մարմինները, որոնք հասանելիություն չունեն զինված ուժերին վերաբերելի մի շարք տեղեկությունների, հնարավորություն են ունենում օմբուդսմենի կողմից հրապարակած զեկույցների հիման վրա իրականացնելու համապատասխան հսկողություն: Միաժամանակ, այս մոդելի առավելություններից է վերջինիս անկախությունը, ինչը բարձրացնում է վերջինիս նկատմամբ հասարակության և զինծառայողների վստահելիությունը և դիմելիության մակարդակը: Թեև այս մոդելը կարող է լինել բավականին արդյունավետ, սակայն այն բավականին մեծ ֆինանսական բեռ կարող է լինել պետության համար, հատկապես փոքր զինված ուժեր ունեցող պետությունների պարագայում, երբ առանձին ինստիտուտի առկայությունը կարող է նպատակահարմար չլինել: Այսպիսի ինստիտուտների թվին են պատկանում Նորվեգիայի զինված ուժերի խորհրդարանական օմբուդսմենը, Գերմանիայի և Ավստրիայի զինված ուժերի խորհրդարանական հանձնակատարները և Իռլանդիայի ռազմական օմբուդսմենը (Heidemann 67-105):

Անդրադառնալով 33-ում գործող օմբուդսմենի ինստիտուտի մոդելին՝ այն պայմանականորեն կարելի է վերագրել ընդհանուր բնույթի օմբուդսմենի ինստիտուտներին, երբ զինված ուժերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է լիազորությունների ավելի լայն շրջանակ ունեցող քաղաքացիական վերահսկողության ինստիտուտի կողմից, որի լիազորությունների մեջ են մտնում հասարակության բոլոր անդամների իրավունքների և

ազատությունների պաշտպանությունը և կառավարության տարբեր ոլորտներին առնչվող բողոքների և խնդիրների հասցեագրումը (ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Հինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոն 323-327):

Ինչպես միջազգային պրակտիկայում այնպես էլ ՀՀ-ում զինված ուժերի ոլորտում օմբուդսմենի համապատասխան գործառնությունների իրականացման նպատակով օմբուդսմենի գրասենյակի ներսում ստեղծվել է մասնագիտացված ստորաբաժանումներ: Մասնավորապես, 2017 թվականից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում գործում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, որը զբաղվում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանությամբ՝ բոլոր փուլերում: Իսկ արդեն 2019 թվականին ձևավորվել է Պաշտպանին առնչվող Հինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհուրդը, որը բաղկացած է մարդու իրավունքների բնագավառում փորձառություն և գիտելիքներ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից (Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա 27-29):

Պաշտպանի կարևոր առաքելություններից է լինել կամուրջ պետության և քաղաքացիական հասարակության միջև: Մասնավորապես, ՄԻՊ-ը իր տարեկան զեկույցում նշել է, որ ակտիվացրել է համագործակցությունը պետական մարմինների (ՀՀ ԱԺ, ՊՆ, Գլխավոր դատախազություն, Զննչական կոմիտե, ԿԳՄՄՆ), հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ: Դրական օրինակ է ՊՆ-ի ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցությունը, մասնավորապես՝ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի գործունեությունը, որը ներառում է թե՛ գծի աշխատանքը և հրապարակային հաշվետվությունների ներկայացումը, ինչը բարձրացնում է ՉՈւ-ում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը: Այդ համատեքստում կարևորվում է նաև ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի, զինկոմիսարիատների, ռազմաբժշկական վարչության, ռազմաբժշկական հանձնաժողովների, հոսպիտալների պատրաստակամությունը Պաշտպանի աշխատակազմի հետ գործունե համագործակցության առումով: ՉՈւ-ում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետք է ողջունելի համարել ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի գործունեությունը, որը ներառում է նաև ՊՆ թե՛ գծի աշխատանքի համակարգումը: Այս առումով կարևոր է նաև նշված ստորաբաժանման հրապարակային և թափանցիկ գործունեությունը (կատարած աշխատանքի վերաբերյալ հաշվետվության ներկայացումը նաև հրապարակային), որը տեսանելի է դարձնում կատարված աշխատանքը և հավելյալ երաշխիք ստեղծում ՉՈւ-ում մարդու իրավունքների պաշտպանության համար (Տարեկան հաղորդում Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 420-423):

Չնայած Հայաստանի ՄԻՊ աշխատակազմում զինված ուժերի ոլորտում մասնագիտացած առանձին ստորաբաժանման և Հինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհուրդի առկայությանը՝ անհրաժեշտ է դիտարկել բացառիկ իրավասություն ունեցող օմբուդսմենի ինստիտուտի (Հայաստանի ռազմական օմբուդսմենի ինստիտուտ) ներդրման հարցը և գործող մոդելի արդյունավետությունը:

Ինչպես վերոգրյալից բխում է, ՀՀ ՄԻՊ ինստիտուտն արդեն ունի լայն լիազորություններ և համապատասխան մեխանիզմներ, որոնք ուղղված են մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանը՝ ներառյալ զինված ուժերում: ՄԻՊ-ը

վերահսկում է գինձառայողների իրավունքների պաշտպանությունը և ունի մուտքի իրավունք ռազմական օբյեկտներ՝ ստուգելու համար իրավունքների խախտումները:

Հաշվի առնելով ՄԻՊ ծավալած գործունեությունը՝ կարող ենք առանձնացնել վերջինիս հիմնական առավելությունները, որոնք վկայում են այս ինստիտուտի արդյունավետությունը: Նախ՝ ՄԻՊ-ը անկախ մարմին է, որը հաշվետու է միայն Ազգային ժողովին: Երկրորդ՝ ՄԻՊ-ը կարող է քննել մարդու իրավունքների խախտումների լայն շրջանակ՝ ներառյալ զինված ուժերում: Երրորդ՝ ՄԻՊ-ի գրասենյակը համագործակցում է միջազգային և տարածաշրջանային մարդու իրավունքների կազմակերպությունների հետ: Չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ հարկ է նշել, որ գործող ՄԻՊ ինստիտուտը զինված ուժերում վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից կարող է համարվել բավարար միջոց միայն որոշակի հանգամանքների առկայության պարագայում: Մասնավորապես՝ անհրաժեշտ է, որ ՄԻՊ-ի գրասենյակի աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվեն մարդու իրավունքների պաշտպանության և ռազմական իրավունքի ոլորտում: ՄԻՊ-ը ներդնի համակարգված մոնիթորինգի մեխանիզմներ՝ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումները կանխելու և բացահայտելու համար:

Բացի այդ, չնայած քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում գործող՝ զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի առկայությանը՝ սույն բաժնի աշխատանքները համակարգելու նպատակով անհրաժեշտ է, որ պաշտպանի տեղակալներից մեկը լինի պարտադիր զինվորական ծառայություն ունեցող, զինվորական գործին և միջավայրին առնչված անձ: Հարկ է նշել, որ վերոնշյալ հանգամանքը՝ որպես օրենսդրական պահանջ, ձևակերպված չէ և նպատակահարմար է, որ կատարվի օրենսդրական համապատասխան փոփոխություն, և այդ ոլորտը համակարգող տեղակալի համար սահմանվի պարտադիր պահանջ՝ զինվորական գործին առնչություն ունենալու և զինված ուժերում ծառայություն ունենալու տեսանկյունից:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում ՄԻՊ գործունեությանը զուգահեռ առանձին ռազմական օմբուդսմենի ինստիտուտ ներդնելուն, ապա նպատակահարմարությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով բոլոր փաստերը և կարիքները:

Այսպես՝ ռազմական օմբուդսմենի ներդնումը կարող է ստեղծել մի շարք հնարավորություններ: Մասնավորապես՝ առանձին ռազմական օմբուդսմենը հնարավորություն կունենա կենտրոնացած լինել բացառապես զինձառայողների իրավունքների պաշտպանության վրա, ինչը կարող է բարձրացնել օմբուդսմենի գրասենյակի մասնագիտական կարողությունները այդ ոլորտում և առավել թիրախային ու տեղին արձագանքել առկա խնդիրներին (Lazányi 519-534): Նման ինստիտուտը, որը կունենա միայն ռազմական ոլորտին վերաբերող գործառնություններ, կարող է բարձրացնել զինձառայողների վստահությունը ռազմական օմբուդսմենի նկատմամբ, ինչն էլ իր հերթին էլ ավելի արդյունավետ կդարձնի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բարեփոխումները: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքների քննության արդյունքում ներկայացվող առաջարկությունների նպատակը բողոքի պատճառ հանդիսացող օրենքի, որոշման կամ քաղաքականության վերանայումն է, բարեփոխումը կամ չեղարկումը, ռազմական օմբուդսմենի գործունեությունը կնպաստի զինված ուժերի համակարգային խնդիրների վերհանմանը և զինված ուժերի մարտունակությունը խոչընդոտող հանգամանքների վերացմանը (Rodrigues et al 191-210): Միաժամանակ, զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության առկա մեխանիզմների շարունակական կատարելագործումը և նոր մեխանիզմների ներդնումը կարող է ամուր հիմք ստեղծել զինված ուժերում մարդու իրավունքների և բարեվարքության (այդ թվում նաև՝ հակակոռուպցիոն գործունեության) ամրապնդման համար (Jilavyan

2022): Այս առումով կարևոր է հաշվի առնել զինվորական ծառայողի ծառայողական վարքագծի չափման այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝

- 1) մոտիվացիոն (մասնագիտական գործունեության գործառնություն),
- 2) հուզական (ռազմական աշխատանքի արդյունքների գնահատման գործառնություն),
- 3) թիրախային (պլանավորման գործառնություն, որոշումների կայացում),
- 4) վարքագծային (մասնագիտական գործողություններ և գործառնություններ իրականացնելու գործառնություն):

Կախված զինվորականների ծառայողական վարքագծի բաղադրիչների տարբեր չափումներից՝ ռազմական օմբուդսմենը կոչված է լինելու խմբավորել և դիտարկել ուսումնասիրվող երևույթի հետևյալ տեսակները.

1) «*ծառայողական-անձնական*» - բնութագրվում է զինվորական ծառայության արժեքների գերակայությամբ, որը դրդված է զարգանալու ռազմական կազմակերպությունում. անձնական նպատակները համահունչ են զինվորական կոլեկտիվի նպատակներին, խելամիտ նախաձեռնությունը և մասնագիտական գործունեությունը նշվում են գործողություններում և արարքներում,

2) «*ծառայողական-ռացիոնալ*» - չափավոր հավատարմություն զինվորական կազմակերպությանը, հարգանք զինվորական ավանդույթների նկատմամբ, զինծառայողի և կազմակերպության նպատակները հիմնականում համընկնում են, դրսևորվում է չափավոր մասնագիտական գործունեություն և նախաձեռնողականություն, կարգապահություն և պատասխանատվություն,

3) «*ռացիոնալ-պրագմատիկ*» - որոշվում է նյութական շահի չափից դուրս դրսևորմամբ, ռազմական կազմակերպման միջոցով անձնական խնդիրների լուծմամբ, զինվորական ավանդույթներն ու վարքագծի նորմերն ընդունվում են անհրաժեշտությունից դրդված, իսկ անձնական շահերը դուրս են տվյալ ստորաբաժանումից:

Վերոհիշյալի համատեքստում, զինվորականների ծառայողական և պաշտոնական վարքագծի ամենաօպտիմալ սոցիալական տեսակը «*ծառայողական-ռացիոնալ*» է, որի ուղղությամբ էլ պետք է աշխատի ռազմական օմբուդսմենի ինստիտուտը:

Այսպիսով, գնահատելով վերոթվարկյալը, կարելի է արձանագրել, որ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրումը կարող է ստեղծել մի շարք նոր հնարավորություններ՝ զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ամրապնդման և մարդու իրավունքների պաշտպանության էլ ավելի ուժեղացման տեսանկյունից:

ՀՀ-ում ռազմական օմբուդսմենի ներդրման անհրաժեշտությունը գնահատելով՝ հարկ է նշել, որ այս ինստիտուտի ներդրումը կարող է ունենալ մի շարք ռիսկեր, որոնք պետք է հաշվի առնել՝ նախքան նման քայլ ձեռնարկելը: Մասնավորապես.

1. Նոր օմբուդսմենի գրասենյակի ստեղծումը պահանջում է լրացուցիչ ֆինանսական և նյութական ռեսուրսներ՝ ներառյալ գրասենյակային տարածքներ, տեխնիկա, աշխատակազմ և այլն: Սա էլ իր հերթին կարող է առաջացնել պետական բյուջեի համար անհարկի բեռ:

2. Առանձին ռազմական օմբուդսմենը կարող է կրկնօրինակել այն գործառնությունները, որոնք արդեն կատարվում են գործող ՄԻՊ-ի գրասենյակի կողմից: Սա կարող է հանգեցնել ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման:

3. Այս ինստիտուտի ներդրումը կարող է առաջացնել կառուցվածքային և ինստիտուցիոնալ համակարգի բարդացում: Այն կարող է բարդացնել մարդու իրավունքների պաշտպանության համակարգը՝ առաջացնելով կառավարման և համակարգման խնդիրներ: Բացի այդ, կարող են առաջանալ հակասություններ երկու օմբուդսմենների գրասենյակների միջև՝ իրավասությունների և պատասխանատվությունների բաշխման հարցում:

4. Հաշվի առնելով, որ մասնագիտացված օմբուդսմենի գրասենյակին անհրաժեշտ են լինելու հատուկ մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետներ, դա կարող է հանգեցնել կադրերի պակասի խնդրի: Բացի այդ, նոր գրասենյակի աշխատակիցները կարող են պահանջել լրացուցիչ ժամանակ և միջոցներ՝ համապատասխան պատրաստվածություն ստանալու համար, ինչը արդյունավետության, ռեսուրսների բաշխման և համապատասխան գործընթացներին արձագանքելու տեսանկյունից կարող է առաջացնել մի շարք ռիսկեր: Այսինքն՝ նոր ինստիտուտի ներդրումը կարող է պահանջել երկար ժամանակ՝ կայուն և արդյունավետ աշխատելու համար, ինչը կարող է առաջացնել անցումային խնդիրներ:

5. Երկու առանձին օմբուդսմենների ինստիտուտների առկայությունը տևական ժամանակ կարող է հասարակության և զինվորականների մոտ առաջացնել շփոթություն և վստահության պակաս: Հնարավոր է, որ մարդիկ չհասկանան, թե ո՞ւմ պետք է դիմել իրենց խնդիրների դեպքում: Բացի այդ, կարող են առաջանալ իրավիճակներ, երբ երկու օմբուդսմենները զբաղվում են միևնույն խնդրով, ինչը կարող է ստեղծել խնդիրների լուծման ձգձգում և անորոշություն:

Այսպիսով՝ ռազմական օմբուդսմենը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցով առանձին մասնագիտացած ինստիտուտ, կարող է բավականին արդյունավետ գործիք լինել, սակայն դրա ներդրումից առաջ անհրաժեշտ է հաշվի առնել ազգային առանձնահատկությունները, ինչպես նաև ՀՀ զինված ուժերի փոքր լինելու հանգամանքը և համապատասխան բյուջեի առկայությունը: Հետևաբար, ինչպես ցանկացած նոր ինստիտուտի պարագայում, այնպես էլ այս դեպքում պետք է խորքային ուսումնասիրել և գնահատել դրա ազդեցության դրական և բացասական կողմերը՝ նախքան նման կարևոր որոշում կայացնելը:

Եզրակացություն

Սույն աշխատանքը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունում ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման հարցը կարևոր նշանակություն ունի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, քաղաքացիական վերահսկողության ամրապնդման և ժողովրդավարական բարեփոխումների խթանման տեսանկյունից: Գործող ՄԻՊ մոդելը, որն ընդգրկում է զինված ուժերի ոլորտը՝ մասնագիտացված ստորաբաժանումների միջոցով, արդեն իսկ ապահովում է զինծառայողների իրավունքների պաշտպանության որոշակի մակարդակ: Այնուամենայնիվ, միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ առանձին ռազմական օմբուդսմենի ինստիտուտը կարող է առավել թիրախային և արդյունավետ լինել՝ բարձրացնելով զինծառայողների վստահությունը, նպաստելով համակարգային խնդիրների բացահայտմանը և խթանելով զինված ուժերի թափանցիկությունն ու մարտունակությունը: Աշխատանքի արդյունքում եզրահանգում ենք, որ ռազմական օմբուդսմենի ներդրումը Հայաստանում կարող է ստեղծել նոր հնարավորություններ, սակայն այն ուղեկցվում է նաև մի շարք ռիսկերով, ինչպիսիք են ֆինանսական բեռը, գործառույթների կրկնօրինակումը, կառավարման բարդացումը և կադրերի պատրաստվածության խնդիրները: Հաշվի առնելով Հայաստանի զինված ուժերի մասշտաբը և առկա ռեսուրսները՝ նման ինստիտուտի ներդրումը պահանջում է խորքային ուսումնասիրություն և հավասարակշռված մոտեցում: Այս պահին, մինչ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման հարցը խորքային ուսումնասիրելը, առավել նպատակահարմար է կատարելագործել գործող ՄԻՊ-ի մեխանիզմները՝ ընդլայնելով մասնագիտացված ստորաբաժանումների կարողությունները, ապահովելով աշխատակիցների վերապատրաստում և օրենսդրական փոփոխություններով սահմանելով ռազմական փորձ ունեցող տեղակալի նշանակման պահանջ:

Ամփոփելով կարող ենք ընդգծել, որ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրումը կարող է դառնալ Հայաստանի զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդման կարևոր քայլ, սակայն դրա նպատակահարմարությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, ֆինանսական հնարավորությունները և գործող համակարգի արդյունավետության բարձրացման հեռանկարները: Հետագա քայլերը պետք է ուղղված լինեն միջազգային փորձի համադրությանը և տեղական կարիքներին համապատասխան մոդելի մշակմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա. *Չինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ կանաչ թուղթ*. Վանաձոր, 2022, <https://hcav.am/greenpaper2022/>: (Վերջին մուտք՝ 15.01.2025):
2. ՀՀ Ազգային ժողով. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենք. 04.02.2017, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123524>: (Վերջին մուտք՝ 17.04.2025):
3. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան. *Տարեկան հաղորդում մարդու իրավունքների պաշտպանի՝ 2023 թվականի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին*. Երևան, 2023: <https://www.ombuds.am/am/site/SpecialReports>: (Վերջին մուտք՝ 17.04.2025):
4. ՀՀ Սահմանադրություն. 06.12.2015, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>: (Վերջին մուտք՝ 17.04.2025):
5. ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Չինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոն. *Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին*. Երևան, 2008, <https://www.osce.org/hy/odihr/88572>: (Վերջին մուտք՝ 15.01.2025):
6. Barseghyan, Syuzanna, & Jilavyan, Svetlana. "Securitization and Democracy in Eurasia: Transformation and Development in the OSCE Region". edited by Anja Mihr, Paolo Sorbello and Brigitte Weiffen. Springer, Cham, 2023, XVII, p. 411, <https://doi.org/10.1007/978-3-031-16659-4>, Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 148-157. <https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.148>.
7. Erkkilä, Tero. *Transnational Governance and Global Diffusion of the Ombudsman Institution. Ombudsman as a Global Institution*. Public Sector Organizations. Palgrave Macmillan, Cham, 2020, https://doi.org/10.1007/978-3-030-32675-3_2, pp 21–63.
8. Heidemann, Frauke. *International Human Rights Law. An International Law Perspective on Harry Potter*. Springer Textbooks in Law. Springer, Cham, 2024, https://doi.org/10.1007/978-3-031-57571-6_4.
9. Jilavyan, Svetlana. "Women's Everyday Lives in War and Peace in the South Caucasus". Edited by Ulrike Ziemer. Cham: Palgrave Macmillan, 2020. X, 281 pp. https://doi.org/10.1007/978-3-030-25517-6_8. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 150-154. <https://doi.org/10.46991/JOPS/2022.1.2.150>.
10. Lazányi, Kornélia. "Human Dynamics in Armed Conflicts". In: Kovács, T.A., Nyikes, Z., Berek, T., Daruka, N., Tóth, L. (eds) *Critical Infrastructure Protection in the Light of the Armed Conflicts*. HCC 2022. *Advanced Sciences and Technologies for Security Applications*. Springer, Cham, 2024, pp 519–534, https://doi.org/10.1007/978-3-031-47990-8_45.
11. Macorya, Amit Kumar, Choudhary, Archana and others. "Diversities and Challenges: Women in Indian Armed Forces". In: Singh, A., Bhadouria, R., Tripathi, S., Modi, R., Gupta, S. (eds) *Empowering Indian Women Through Resilience*. Springer, Singapore, 2024, pp 291–308, https://doi.org/10.1007/978-981-96-0986-4_15.

12. Medeiros, Passos. *The Use of Violence by Military Personnel. In: Democracies at War Against Drugs. The Sciences Po Series in International Relations and Political Economy*. Palgrave Macmillan, Cham, 2022, pp 195–242, https://doi.org/10.1007/978-3-031-11327-7_6.

13. Rodrigues, José Noronha, Medina, Janny Carrasco and others. *The Protection of Economic, Social and Cultural Rights in Armed Conflicts: The Right to Education Between Myths and Realities*. In: Zajda, J., Vissing, Y. (eds) *Globalisation, Human Rights and Education*. Globalisation, Comparative Education and Policy Research, vol 51. Springer, Cham, 2025, pp 191–210, https://doi.org/10.1007/978-3-031-80304-8_10.

14. Содружество независимых государств. «Модельный закон о парламентском контроле над военной организацией государства». под редакцией Ф. Флюри и А.И. Никитина. Женева, 2012, с.1-16. (Последний доступ: 17.04.2025)

WORKS CITED

1. Hayastani Hanrapetut'yan Sahmanadrut'yun [Constitution of the Republic of Armenia] 2015. (In Armenian)

2. Helsinkyan qaghaqaciakan asamblea. Zinvac' ujheri barep'oxumneri veraberyal kanach t'ught'. Vanad'or, ["Green Paper on Armed Forces Reform", Vanadzor] 2022. (In Armenian)

3. HH Mardu iravunqneri pashtpan. Tarekan hagortsum Mardu iravunk'neri pashtpani 2023 t'vakani gorcut'yan, mardu iravunk'neri yev azatut'yunneri pashtpanut'yan vichaki masin [Annual Report on the Activities of the Human Rights Defender and the State of Protection of Human Rights and Freedoms in 2023, Yerevan] 2023. (In Armenian)

4. HH Azgayin Zhoghov, "Mardu iravunk'neri pashtpani masin orenq" [Law on the Human Rights Defender] 2017. (In Armenian)

5. EAHK JhHMIG-i ev Zinvac' ujheri jhoghovrdavarakan verahskoghut'yan jhnevyan kentron. D'er'nark zinvac' ujheri and'nakazmi mardu iravunqneri ev himnaran azatut'yunneri masin[OSCE/ODIHR and Geneva Centre for the Democratic Control of Armed Forces, Handbook on Human Rights and Fundamental Freedoms of Armed Forces Personnel]. Erevan, 2008, <https://www.osce.org/hy/odihr/88572>: (Accessed:15.01.2025). 2008. (In Armenian)

6. Содружество независимых государств. "Model'nyj zakon o parlamentskom kontrole nad voennoj organizaciej gosudarstva" [Model Law on Parliamentary Oversight of the Military Organisation of the State]. pod redakciej F. Fljuri i A.I. Nikitina. Zheneva, 2012, s.1-16. (Accessed: 17.04.2025) (in Russian)

THE INSTITUTE OF MILITARY OMBUDSMAN AS A MECHANISM OF CIVIL CONTROL IN THE ARMED FORCES

SVETLANA JILAVYAN

*Russian-Armenian University, Institute of International Relations and Socio-Political Sciences, Department of World Politics and International Relations, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia*

The article examines the role of the military ombudsman institution in the formation of a civilian control mechanism in the armed forces. The author emphasizes the

importance of the ombudsman's activities in protecting the rights of military personnel, promoting internal reforms, and strengthening legal and democratic control in the armed forces. The purpose of the study is to assess the effectiveness of the current model of the Human Rights Defender of Armenia and discuss the feasibility of introducing a separate military ombudsman institution.

The main objectives of the article are:

- To study the role of the military ombudsman in protecting the rights of military personnel and strengthening democratic control in the armed forces.
- To analyze international experience, as well as the advantages and disadvantages of ombudsman models in different countries.
- To assess the current functions of the Human Rights Defender of Armenia and their limitations.
- To identify the potential benefits and risks of creating a separate institution of the military ombudsman.

The research methods include comparative analysis, study of international experience, assessment of the legislative and institutional framework of the Republic of Armenia. Qualitative methods were also used to assess the effectiveness and applicability of ombudsman models.

The article concludes with a comprehensive study of the effectiveness of introducing the military ombudsman institution in Armenia, combining international experience and national characteristics.

Keywords: *Human Rights Defender, civilian control, armed forces, legal restrictions, international experience, rights of military personnel, military ombudsman.*

ИНСТИТУТ ВОЕННОГО ОМБУДСМЕНА КАК МЕХАНИЗМ ГРАЖДАНСКОГО КОНТРОЛЯ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ

СВЕТЛАНА ДЖИЛАВЯН

*аспирант кафедры мировой политики и международных отношений
Института международных отношений и социально-политических наук
Российско-Армянского университета,
г. Ереван, Республика Армения*

В статье рассматривается роль института военного омбудсмeна в формировании механизма гражданского контроля в вооруженных силах. Исследователь подчеркивает важность деятельности омбудсмeна в защите прав военнослужащих, содействии внутренним реформам, усилении правового и демократического контроля в вооруженных силах. Целью исследования является оценка эффективности действующей модели Защитника прав человека Армении и обсуждение целесообразности введения отдельного института военного омбудсмeна.

Основными задачами статьи являются:

- изучить роли военного омбудсмeна в защите прав военнослужащих и укреплении демократического контроля в вооруженных силах.
- проанализировать международный опыт, а также преимущества и недостатки моделей омбудсмeна в разных странах.
- оценить текущие функции Защитника прав человека Армении и их ограничения.

- определить потенциальные преимущества и риски создания отдельного института военного омбудсмана.

Методы исследования включают сравнительный анализ, изучение международного опыта, оценку законодательной и институциональной базы Республики Армения. Для оценки эффективности и применимости моделей омбудсмана также использовались качественные методы.

В заключении статьи предлагается комплексное исследование эффективности введения института военного омбудсмана в Армении, сочетающее международный опыт и национальные особенности.

Ключевые слова: *Защитник прав человека, гражданский контроль, вооруженные силы, правовые ограничения, международный опыт, права военнослужащих, военный омбудсмен.*